

---

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1921-1922 ԹԹ.)

### ՄԻՋՐԱՆ ՀԱԿՈՐՅԱՆ

Հայաստանի առաջին Հանրապետության կարճատև գոյության գրեթե ամբողջ ընթացքում արտաքին քաղաքական ոչ բարենպաստ իրադրությունը և ներքաղաքական լարված իրավիճակը խոչընդոտում էին Հայաստանում սոցիալ-տնտեսական բարեփոխումներին միտված ծրագրերի իրականացմանը և երկրի բնականոն զարգացմանը: Հայաստանի իշխանություններն առավելապես զբաղված էին արտերկրից ֆինանսական վարկեր և օգնություն ստանալու, պարեն և առաջին անհրաժեշտության ապրանքներ ձեռք բերելու և երկիր ներմուծելու խնդիրներով:

Հայաստանի դրությունն էլ ավելի վատթարացավ 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմում կրած ծանր պարտության հետևանքով: Թուրքական զինագրավման տակ էին հայտնվել գյուղատնտեսական տեսակետից առավել բարենպաստ հայկական տարածքները, այդ իսկ պատճառով Հայաստանի խորհրդայնացման պահին երկիրը և ժողովուրդը հայտնվել էին կործանման վտանգի առջև:

1919-1920 թթ. Հայաստանում ծնելիության մակարդակը կազմում էր ընդամենը 8.7 մարդ, իսկ մահացությանը՝ 204.2 մարդ 1000-ից, այսինքն՝ բնակչության նվազումը անցել էր բոլոր տեսակի ընդունված չափանիշները և կազմում էր 195.5 մարդ 1000-ից: Եվ սա այն դեպքում, երբ երկրի բնակչության թիվը ընդամենը 720 հազար էր<sup>1</sup>:

1920-1922 թթ. Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական իրադրության ճշգրիտ գնահատական է տվել կուսակցական և պետական անվանի գործիչ Ս. Լուկաշինը՝ նշելով, որ «Խորհրդային Հայաստանի առաջին երկու տարիները մի կտոր հացի համար մղվող պայքարի տարիներ էին»<sup>2</sup>:

Նման անմխիթար իրավիճակում ստանձնելով իշխանությունը՝ հայ կոմունիստները գիտակցում էին, որ երկրում խորհրդային կարգերը ամրապնդելու գործընթացի հաջողությունն ամբողջապես կախված է երկրի տնտեսությունը վերականգնելուց և սոցիալական խիստ լարված վիճակը արագորեն վերացնելուց, այդ իսկ պատճառով բոլշևիկները ստիպված էին ձեռնարկելու մի շարք իրատապ միջոցառումներ: Նրանք հասկանում էին, որ տնտեսական անմխիթար վիճակը փրկելու համար նախ և առաջ հարկավոր է օժանդակություն ստանալ Խորհրդային Ռուսաստանից, ապա նաև կարգավորել հարաբերությունները հարևան պետությունների, թերևս

---

<sup>1</sup> Տե՛ս **Կ. Հ. Խաչատրյան**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007, էջ 187:

<sup>2</sup> **Ս. Լ. Լուկաշին (Սրապիոնյան)**, Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Եր., 1986, էջ 77:

առաջին հերթին Խորհրդային Ադրբեջանի հետ, քանզի Ադրբեջանից էր միայն հնարավոր մատչելի գներով ներկրել էներգակիրներ, առանց որի Խորհրդային Հայաստանի տնտեսությունը չէր կարող զարգանալ<sup>3</sup>:

Տնտեսության վերականգնումը և հարևան երկրների հետ հարաբերությունների կարգավորումը նույն հարթության վրա էր դիտարկում նաև Հայիեդկոմի նախագահի տեղակալ և արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանը: 1923 թ. մոսկովյան «Ազգությունների կյանքը» ամսագրում տպագրված «Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը» հոդվածում Բեկզադյանը գրում է. «Անդրկովկասյան «դեղին տոմսի դեմ», ինչպես և պետք էր սպասել, առաջինը հաղթականորեն ապստամբեցին Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները և տապալեցին իրենց մուսավաթական կառավարիչներին: Բաքվի պրոլետարիատը, հաշվի առնելով ավիշերոնյան նավթի նշանակությունը Անտանտի դեմ ռուսական պրոլետարիատի մղած հաղթական պայքարի համար, ապստամբեց՝ օգնության կանչելով Կարմիր բանակին, և իր հաղթանակով ոգևորեց Վրաստանի ու Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին: Ադրբեջանում բանվորագյուղացիական իշխանություն հայտարարվեց 1920 թ. մայիսի նախօրյակին, Հայաստանի սովետականացումից գրեթե մեկ տարի առաջ: Սովետական Ռուսաստանին ավելի շուտ միանալու շնորհիվ, ինչպես նաև այլ պատճառներով, շինարարությունն Ադրբեջանում ավելի պլանաչափ բնույթ ընդունեց, և Ադրբեջանը ավելի շուտ, քան Անդրկովկասի մնացած մասը, բռնեց իր տնտեսության վերականգնման ճիշտ ուղին և արդեն հաստատուն նվաճումներ ունի»<sup>4</sup>:

Հայ-ադրբեջանական տնտեսական հարաբերությունների համատեքստում ուշագրավ է ՀՍԽՅ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի ելույթը 1922 թ. հունվարի 26-29-ը տեղի ունեցած Հայաստանի Կոմկուսի առաջին համագումարի ժամանակ, երբ նա, հերքելով իր և ՀԿ(բ)Կ Կենտկոմի հասցեին հնչած խիստ քննադատությունը և ծանր մեղադրանքները, որ Լեռնային Ղարաբաղի հարցում չի դրսևորվել վճռականություն, հայտարարում է, որ Կովկասյան բյուրոյի պլենումի նիստը հիշեցնում էր Հարավային Կովկասի հանրապետությունների նախկին ղեկավարների պայքարը. «... Ադրբեջանն ասում էր՝ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա մենք նավթ չենք մատակարարի»<sup>5</sup>: Սա վկայում է այն մասին, որ ադրբեջանական կողմը երկրի արտաքին քաղաքականության կառուցման գործում խիստ կարևորում էր տնտեսական գործունեությունը և շահարկելով էներգակիրների մատակարարման խնդիրը՝ տարածքային հարցերում ևս փորձում էր զիջումներ կորզել:

Ադրբեջանցիների որդեգրած այս քաղաքական գիծը շարունակվեց նաև 1922 թ. ընթացքում: Հայ-ադրբեջանական «նավթային փոխհարաբերություններում» ադրբեջանական տնտեսական լծակների կիրառման վառ

<sup>3</sup> Տե՛ս Մ. Հակոբյան, Ադրբեջանական էներգակիրների մատակարարման խնդիրը հայ-ադրբեջանական հարաբերություններում Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատումից հետո 1920-1922 թթ., «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 2(39), Եր., 2009, էջ 216-221:

<sup>4</sup> Ա. Հ. Բեկզադյան, Նամակներ, հոդվածներ, փաստաթղթեր, Եր., 1981, էջ 46:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 13, 23:

օրինակներից է 1922 թ. օգոստոսին տեղի ունեցած միջադեպը, երբ «Ազնկթը» հրաժարվեց հայաստանյան ձեռնարկություններին մատակարարել առաջին կարգի կերոսին: Կասկածից վեր է, որ «Ազնկթը» առանց Խորհրդային Ադրբեջանի քաղաքական ղեկավարության համաձայնության չէր կարող նման քայլի դիմել: Կարծում ենք, որ ստեղծված իրադրության հիմնական պատճառն այն էր, որ «Ազնկթը» շատ ավելի մեծ շահույթ էր ստանում առաջին կարգի կերոսինը արտասահմանյան երկրներ արտահանելուց, քան Խորհրդային Հայաստանին վաճառելուց: Ադրբեջանում որոշում էր կայացվել նավթը հասցնել Բաթումի նավահանգիստ և այնտեղից վաճառել արտասահմանյան նավթային ընկերություններին: Արխիվում պահպանված փաստաթղթերը ապացուցում են, որ, բացի ավելի մեծ շահույթ ստանալու նպատակից, «Ազնկթը» նաև այլ խնդիր էր լուծում: Հասկանալով, որ Խորհրդային Հայաստանի տնտեսության համար այդ ժամանակաշրջանում էներգակիրների կարևորագույն տեսակ կերոսինը կենսական նշանակություն ուներ, և հայաստանյան ձեռնարկությունները ստիպված գնելու էին նաև երկրորդ կարգի կերոսին, ադրբեջանցիները, փաստորեն, ցանկանում էին Հայաստան արտահանել անորակ կերոսին, որը կուտակվել էր «Ազնկթի» պահեստներում և չէր սպառվում: Միևնույն ժամանակ Խորհրդային Ադրբեջանում ՀՍԽՅ տնտեսական ներկայացուցչին հղած գրության մեջ «Ազնկթի» կերոսինի բաժնի վարիչը նշում էր, որ «այս իրավիճակը տևելու է ոչ ավել, քան 6-7 ամիս»<sup>6</sup>:

Բացի այս միջադեպից, 1922 թ. ամռանը ծագեց մեկ այլ խնդիր ևս. հունիսին Բաքվի «Ազնկթի» գրասենյակից Վրաստանի ժողովուրդին հաղորդվել էր, որ Խորհրդային Ադրբեջանի տարածքից դուրս եկող և Վրաստանի տարածք մտնող նավթատար գնացքները կանգնեցվում են, և արգելվում է նրանց մուտքը Վրաստանի տարածք, իսկ այնտեղից՝ Խորհրդային Հայաստան: Պատճառը նավթամթերքները հարկելու մասին նոր որոշումն էր: Ադրբեջանի ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը պահանջում էր հարկերը վճարել հենց տեղում և կանխիկ գումարով, մինչդեռ Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհուրդը, ինչպես նաև Հայաստանի տարբեր ձեռնարկություններ ունեին «Ազնկթի» հետ կնքած պայմանագրեր, համաձայն որոնց նավթամթերքների համար վճարումները կատարվելու էին բանկային փոխանցումների միջոցով: Հետագա անախորժություններից խուսափելու համար «Ազնկթը» խնդրում էր ձեռնարկել համապատասխան միջոցներ և հայտնում, որ առկա խնդիրների պատճառով ժամանակավորապես դադարեցնում է մատակարարումը<sup>7</sup>:

Այսպիսով, ակնհայտ էր, որ Խորհրդային Հայաստանի համար Բաքվի նավթը ուներ կենսական նշանակություն, որը խաղաթուղթ էր Ադրբեջանի ձեռքում: Եթե հայկական կողմը շահագրգռված էր Խորհրդային Ադրբեջանից նավթի անխափան մատակարարումով և պարտաճանաչորեն վճարում էր դրա դիմաց, ապա ադրբեջանցիները, հասկանալով էներգակիրների կենսական նշանակությունը ՀՍԽՅ քայքայված տնտեսության զար-

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 29:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 58:

գացման համար, հաճախ արհեստականորեն խնդիրներ էին ստեղծում՝ պայմաններ թելադրելու, ինչու չէ՝ նաև քաղաքական զիջումներ կորզելու նպատակով:

1920-1922 թթ. հայ-ադրբեջանական տնտեսական հարաբերությունների պատմության տեսակետից կարևոր նշանակություն ունի նաև սահմանային-տնտեսական առնչությունների լուսաբանումը: 1921 թ. սկզբներից խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանի ղեկավարությունը սկսեց խոչընդոտներ հարուցել Հայաստանի Իջևանի և Շամշադինի շրջանների անասնապահների համար: 1921 թ. փետրվարի 16-ին Իջևանի Հեղկոմի երկրագործական բաժանմունքի վարիչը գրում է Հայաստանի Հեղկոմի նախագահին. «Իջևանի շրջանի անասունները կերի պակասության պատճառով ոչնչանում և կոտորվում են: Հայտնելով այդ մասին՝ խնդրում եմ շտապ կերպով միջոցառել Ադրբեջանի խորհրդային իշխանության առաջ թույլ տալու անասուններին հովիտներում արածացնելու համար»<sup>8</sup>: Այս մասին ՀՍԽՍՀ արտգործոժողկոմի տեղակալը անմիջապես տեղյակ է պահում Բաքվում ՀՍԽՍՀ դիվանագիտական ներկայացուցիչ Աթաբեկովին՝ հրահանգելով անմիջապես կապ հաստատել Ադրբեջանի ղեկավարության հետ և հարցին լուծում գտնել<sup>9</sup>: Սակայն խնդիրը ոչ թե լուծվեց, այլ ավելի բարդացավ, քանզի արոտավայրերի հարցին գումարվել էր նաև անտառը ապօրինի հատելու խնդիրը: Հայտնի է, որ Ադրբեջանի հյուսիսարևմտյան սահմանահատվածում անտառներ չկան, և տեղի ադրբեջանական իշխանությունների թողտվությամբ Իջևանի և Շամշադինի շրջաններին հարակից ադրբեջանական գյուղերի բնակիչները անխնա ոչնչացնում էին անտառը և փայտանյութը տեղափոխում Ադրբեջան<sup>10</sup>: Այս կապակցությամբ Դիլիջանի Հեղկոմի նախագահի զեկուցագրում նշված է. «Ադրբեջանի հարևանությամբ գտնվող հայկական Լալակենդ գյուղի մոտակայքի անտառն ապօրինաբար հատվում է թաթարների կողմից և տեղափոխվում Ադրբեջան: Անտառը ոչնչացնելու ժամանակ թաթարները զինված են, այդ իսկ պատճառով անտառապահները ունակ չեն լինում պաշտպանել անտառը: Տեղում ձերբակալված թաթարները հրաժարվում են հրապարակել իրենց ազգանունները արձանագրություն կազմելու համար: Չնայած որ բազմիցս դիմել ենք Ղազախի շրջանային իշխանություններին միջոցներ ձեռնարկելու անտառի ոչնչացումը կանխելու համար, սակայն ցայսօր ոչ մի քայլ այդ ուղղությամբ չի արվել»<sup>11</sup>:

Հայկական կողմի բոլոր բողոքներին թե՛ Ղազախի և թե՛ Բաքվի իշխանությունները պատասխանում էին, որ իրենք բոլոր իրավունքներն ունեն օգտվելու անտառից: Այդ կապակցությամբ 1921 թ. փետրվարի 25-ին Ս. Կասյանին ՀՍԽՍՀ Հողգործկոմի տեղակալի ուղղած զեկուցագրում նշվում է. «Պատիվ ունեն Ձեզ հայտնելու, որ նախկին Ելիզավետպոլի նահանգի Աղստաֆյան անտառ-տնտեսությունը 1918 թ. անցել է Հայաստանի Հան-

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ.114, ց. 2, գ. 27, թ. 50:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 51:

<sup>10</sup> Տե՛ս **Մ. Տ. Հակոբյան**, Հայ-ադրբեջանական սահմանային խնդիրները ՀՍԽՍՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում 1921-1922 թթ., «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1(624), Եր., 2009, էջ 39-48:

<sup>11</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 45, թ. 80:

րապետությանը, և մինչ այժմ գտնվում է մեր տնօրինության տակ»<sup>12</sup>: Ադրբեջանի իշխանություններն էլ ՀՍԽՍՀ իշխանություններին մեղադրում էին, թե ադրբեջանցի քոչվոր-անասնապահներին թույլ չի տրվում բարձրանալ Հայաստանի լեռները: Առկա խնդիրները քննարկելու և ուղղիներ գտնելու համար 1921 թ. մայիսի 24-ին Մռավյանը գրում է Ադրբեջանի արտգործոժողկոմ Յուսեյնովին. «Քոչվորների հարցը լուծելու համար խնդրում են լիազորեք ինչ-որ մեկին Դիլիջանի Յեղկոմի նախագահ Աթաբեկովի հետ բանակցելու համար: Նա իմ կողմից ստացել է բոլոր լիազորությունները բանակցելու համար: Առաջարկում են բանակցությունները վարել Դիլիջան քաղաքում և հենց տեղում որոշել քոչվորների հարցը»<sup>13</sup>: Հեռագրում Մռավյանը հանգամանորեն անդրադառնում էր հայ-ադրբեջանական սահմանային հատվածում ստեղծված իրադրությանը՝ Ղազախի շրջանային իշխանությունների անպատասխանատու գործողություններին, ադրբեջանցիների կողմից հայ գյուղացիների վարելահողերին ապօրինի տիրանալու, անասնագողության և ապօրինի ծառահատության, ինչպես նաև ադրբեջանցի գյուղացիների զինված լինելու փաստերին<sup>14</sup>:

Մայիսի 26-ին Յուսեյնովին ուղղված մեկ այլ հեռագրում Մռավյանը գրում է. «Չեն հասկանում, թե ինչո՞վ են պայմանավորված Ադրբեջանի Յեղկոմի գործողությունները, սակայն դրանք ցավալիորեն հարվածում են Դիլիջանի շրջանի բնակչությանը: Թաթարների անցումը արոտավայրեր և ազատ ապրանքափոխանակումը չապահովելուն ուղղված գործողությունները կարող են օգտագործվել սադրիչների կողմից ազգամիջյան բախումներ հրահրելու համար: Խնդրում են անհապաղ միջոցներ ձեռնարկել ազատ ապրանքափոխանակությունը ապահովելու և սահմանային հատվածում ազգաբնակչության կրքերը հանգստացնելու համար»<sup>15</sup>:

Սակայն ադրբեջանական կողմը ձգձգում էր բանակցությունների բացումը՝ փաստացիորեն կազմակերպելով ՀՍԽՍՀ հյուսիսարևելյան սահմանահատվածի հայկական բնակավայրերի «տնտեսական էմբարգո»: Այս կապակցությամբ Մռավյանը հեռագրում է Յուսեյնովին. «Դիլիջանի շրջանի աղքատ գյուղացիները սուր կարիքի պատճառով տեղի մեր իշխանության թույլտվությամբ Ադրբեջան են տանում անասուններ և այլ ապրանքներ ցորենով փոխանակելու համար: Սակայն Հայաստան վերադառնալու ճանապարհին ցորենը հայերի ձեռքից խլվում է ադրբեջանցի սահմանապահների կողմից: Այս երևույթը իր հետ բերում է բնականոն դժգոհություն և սադրիչներին հնարավորություն է ընձեռում քարոզել Հայաստանի լեռնային արոտավայրեր ադրբեջանցի գյուղացիների մուտքը արգելելու համար: Խորհրդային Հայաստանում սովի երևույթները թեթևացնելու և ադրբեջանցի քոչվորների դեմ սադրանքները բացառելու համար խնդրում են բացել սահմանային կետերը, հատկապես որ Անդրկովկասի հանրապետությունների մոտակա կոնֆերանսում, կարծում են, այդ հարցը ստանալու է ընդհանուր դրական լուծում»<sup>16</sup>: Բաքվի լռության պատճառով հեռագրերը

<sup>12</sup> Նույն տեղում, ց.1, գ. 39, թ. 6:

<sup>13</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 45, թ. 19:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 83:

<sup>15</sup> Նույն տեղում, թ. 23:

<sup>16</sup> Նույն տեղում, թ. 68:

Երևանից հետևում էին մեկը մյուսին: Բաքվում գիտակցում էին, թե ինչպիսի նշանակություն ունեն Ղազախի և Թովուզի շրջանների ցորենի շուկաները հայ բնակչության համար և, փաստորեն, շարունակում էին նախկին քաղաքականությունը: Նշենք, որ Դիլիջանից և Իջևանից տեղական իշխանությունները շարունակում էին սահազանգել, որ սահմանային հատվածում ադրբեջանցի սահմանապահները խլում են Ադրբեջանում գնված ցորենը, զինվորական հագուստը, իսկ ադրբեջանցի քոչվորները շարունակում են անասնազոռությունը հայկական գյուղերից, և այդ կապակցությամբ Ղազախի իշխանությունները ոչ մի քայլ չեն ձեռնարկում<sup>17</sup>: Կարծում ենք, Ադրբեջանի կողմից բանակցությունների բացման ձգձգելու նպատակը հայկական գյուղերում սով սկսելու սպառնալիքի ստեղծումն էր, որը և հայկական կողմին կստիպեր բանակցությունների ընթացքում զիջողական դիրքորոշում որդեգրել:

Ի վերջո Դիլիջանում տեղի ունեցան բանակցություններ, սակայն հետագա դեպքերը ապացուցում են, որ պայմանավորվածությունները այդպես էլ չպահպանվեցին: Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ սահմանային անցակետերը պետք է բացվեին ազատ ապրանքափոխանակության համար: Բացի դրանից, ադրբեջանական կողմը պարտավորվում էր ցորենը հնձելուց անմիջապես հետո հայկական Թազաքենդ գյուղի բնակիչներին վերադարձնել խլված վարելահողերը: Արդեն սեպտեմբերի 13-ին Դիլիջանի Չեղկոմի նախագահի զեկուցագրում նշվում է, որ Չայաստանի և Ադրբեջանի իշխանությունների միջև ձեռք բերված պայմանավորվածությունները չեն կատարվում: Նույն զեկուցագրում ասված է նաև, որ սահմանային հատվածում ցանքատարածությունները օգտագործելուց հետո Ղազախի իշխանությունները պետք է ստիպեին ադրբեջանցիներին (համաձայն Դիլիջանում ձեռք բերված համաձայնության) ազատել ցանքատարածությունները, սակայն այդ ուղղությամբ ոչ մի քայլ չի ձեռնարկվել: Դիլիջանի Չեղկոմի նախագահը խնդրում էր անհապաղ միջոցներ ձեռնարկել Բաքվի միջոցով Ղազախի իշխանությունների վրա ազդելու և հողերը վերադարձնելու համար<sup>18</sup>: Ադրբեջանական կողմը իր հերթին դժգոհում էր, որ ադրբեջանցի քոչվոր անասնապահները խտրականության են ենթարկվում ՉՍԽՅ հյուսիսարևելյան սահմանահատվածի լեռները բարձրանալիս: Չունիսի 14-ին Ադրբեջանի արտգործողական խորհրդական Անդրեևը այս կապակցությամբ Ա. Մռավյանին գրում է. «Թովուզի գործադիր կոմիտեի նախագահը տեղեկացնում է, որ ադրբեջանցի քոչվորների համար նախատեսված արոտավայրերը կիսով չափ օգտագործվել են ցանքի համար: Քոչվորները տեղական իշխանությունների կողմից բռնության են ենթարկվում և Չայաստանի կառավարությունը, չնայած բազմիցս մեզ ուղարկված հեռագրերի, ոչ մի քայլ չի անում քոչվորների վիճակը թեթևացնելու համար: Անցանկալի հետևանքներից խուսափելու համար խնդրում են անհապաղ միջոցներ ձեռնարկել քոչվորներին անհրաժեշտ արոտավայրերով ապահովելու համար»<sup>19</sup>: Սրան ի պատասխան, ՉՍԽՅ արտգործողական կատարատեսակ

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 82:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, գ. 98, թ. 86:

<sup>19</sup> Նույն տեղում, գ. 45, թ. 36:

նուն է. «Դիլիջանի Յեղկոմին հանձնարարված է ուսումնասիրել տեղական իշխանությունների վերաբերմունքը քոչվորների նկատմամբ և խտրականությունների փաստերի բացահայտման դեպքում անմիջապես վերացնել դրանք և այդ մասին զեկուցել Երևան»<sup>20</sup>: Պահանջված պարզաբանում-զեկուցագրում հունիսի 29-ին Դիլիջանի Յեղկոմի նախագահը գրում է. «...ադրբեջանցի քոչվորները հայկական իշխանությունների կողմից ոչ մի տեսակի խտրականության չեն ենթարկվում: Խնդրում են կոնկրետ դեպքեր մատնանշեք, եթե այդպիսիք առկա են: Միայն որոշ հողակտորներ են օգտագործվում որպես ցանքատարածքներ, որոնք տրված են օգտագործման տարբեր հիմնարկությունների մինչև քոչվորների ժամանումը: Հայտնեք Բաքու, որ քոչվորները խտրականության ցանկացած դեպքի առիթով կարող են դիմել տեղական իշխանություններին՝ Դիլիջանի Յեղկոմի նախագահ Աթաբեկովին»<sup>21</sup>: Սեպտեմբերի 10-ի մեկ այլ զեկուցագրով քոչվորների հարցերով Դիլիջանի Յեղկոմի հատուկ պատասխանատուն գրում է. «Ադրբեջանից ժամանած քոչվոր անասնապահները իրենց 60 հազարանոց հոտով բարձրացել են հայկական լեռները նախկին ավանդական ճանապարհներով: Արոտավայրեր հասնելու գործընթացը անցել է խաղաղ պայմաններում, առանց խոչընդոտների»<sup>22</sup>:

Կարծում ենք, վերոբերյալ զեկուցագրերը բավարար են փաստելու, որ հայկական կողմը պահպանել էր պայմանավորվածությունները, և ադրբեջանցի քոչվոր անասնապահները ՅՍԽՅ տարածքում խտրականության չեն ենթարկվել, իսկ ինչ վերաբերում է այդ կապակցությամբ Բաքվի և Ղազախի իշխանությունների գրություններին, ապա, կարծում ենք, որ դրանք սեփական գործողությունները քողարկելու նպատակ ունեին, քանզի ադրբեջանցի բուլշևիկները առաջնորդվում էին «լավագույն պաշտպանությունը հարձակումն է» սկզբունքով:

Ի վերջո, առկա վիճելի հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու համար ՅՍԽՅ Կենտգործկոմի առաջարկությամբ ստեղծվեց խառը հանձնաժողով: Հարցը քննարկվեց նաև Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միության Խորհրդի նախագահության նիստում 1922 թ. մայիսի 29-ին<sup>23</sup>: Այնտեղ քննարկվեց նաև Ակսիմբարայի կիրճի մոտակայքում գտնվող անտառի հարցը: Ընդունվեց հետևյալ որոշումը. «Ակսիմբարայի կիրճի մոտակայքում գտնվող անտառային տնտեսությունը հանձնել Ղազախի իշխանությունների տնօրինությանը»<sup>24</sup>: Այս որոշման հիմնական պատճառն այն էր, որ թե՛ Բաքվի և թե՛ Ղազախի ու Թովուզի իշխանությունները պնդում էին, թե՛ Խորհրդային Ադրբեջանը, քանի որ սահմանի այդ հատվածում զուրկ է անտառից, և փայտանյութի խիստ պահանջ ունի, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ադրբեջանին օգտվելու Հայաստանի անտառներից: Փաստորեն, համաձայն Միութենական Խորհրդի նիստի որոշման, անտառի

<sup>20</sup> Նույն տեղում, թ. 37:

<sup>21</sup> Նույն տեղում, գ. 98, թ. 15:

<sup>22</sup> Նույն տեղում, ֆ. 113, գ. 1, գ. 2, թ. 266:

<sup>23</sup> Տես նույն տեղը, ֆ. 112, գ. 2, գ. 3, թ. 133:

<sup>24</sup> Նույն տեղում:

տարածքը ՀՍԽ՜Հ ինքնիշխանության տիրույթում էր, սակայն Խորհրդային Ադրբեջանը ստանում էր անտառի օգտագործման «բացառիկ տնտեսական իրավունք»: Ինչ վերաբերում է քոչվորների հիմնախնդրին, ապա որոշվեց առաջարկել ՀՍԽ՜Հ և ԱՍԽ՜Հ ժողկոմխորհներին Իջևանի, Ղազախի և Թովուզի գործկոմների միջոցով ստեղծել հանձնաժողով, որը պետք է որոշեր ադրբեջանցի քոչվորների համար 1923 թ. նախատեսվող արոտավայրերի տեղը և այնտեղ հասնելու ուղիները, ինչպես նաև միասնական հարկ սահմաններ ադրբեջանցի քոչվոր անասնապահների համար<sup>25</sup>: Սակայն ադրբեջանական կողմը այսքանով չսահմանափակվեց, և բազմիցս փորձեց Խորհրդային Ադրբեջանին կցել Հայաստանի վարչական սահմաններում ներառված քոչավայրերը: Ադրբեջանցի քոչվոր անասնապահների հարցը տարբեր առյաններում քննարկվելուց հետո վերջնական լուծում ստացավ 1922 թ. նոյեմբերի 6-ին, երբ Միութենական խորհրդի ստեղծած հանձնաժողովը ընդունեց հետևյալ որոշումը. «Տեղում ստեղծել հատուկ հանձնաժողով, որը կորոշի քոչվորների՝ լեռները բարձրանալու ժամկետները և ուղիները: Քոչվորների վճարելիք հարկերը չպետք է ավելի բարձր լինեն, քան նախապատերազմյան շրջանում: Քոչվորներից հարկերը պետք է հավաքվեն ադրբեջանական իշխանությունների միջոցով և ԱՍԽ՜Հ ժողկոմխորհի միջոցով փոխանցվեն ՀՍԽ՜Հ ժողկոմխորհին»<sup>26</sup>:

Այսպիսով, վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնելու, որ 1921-1922 թթ. հայ-ադրբեջանական առևտրատնտեսական հարաբերությունները, չնայած Հայաստանում և Ադրբեջանում հաստատված խորհրդային կարգերին և դրանից բխող «կոմունիստական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության» գաղափարախոսական դրույթներին, կրում էին խիստ լարված բնույթ, որի հիմնական պատճառը Ադրբեջանի բուլչևիկների վարած հակահայ քաղաքականությունն էր, ինչը և իր արտացոլումն էր գտնում նաև տնտեսական հարցերում: 1921-1922 թթ. ադրբեջանական տնտեսական պատժամիջոցների դրսևորումները ծրագրված բնույթ են կրել և դրսևորվել են նավթի մատակարարման, սահմանային առևտրի և անտառի օգտագործման համատեքստում: Կարող ենք վստահորեն պնդել, որ այս շրջանում ադրբեջանական տնտեսական պատժամիջոցները նպատակ ունեին թուլացնելու հայկական կողմի դիրքերը և տարաբնույթ քաղաքական հարցերը լուծել հօգուտ Խորհրդային Ադրբեջանի:

**МИГРАН АКОПЯН – Из истории армяно-азербайджанских экономических связей в первые советские годы (1921–1922).** – В 1921–1922 гг. армяно-азербайджанские торгово-экономические отношения носили напряженный и сложный характер, несмотря на то, что в Армении, как и в Азербайджане, была установлена советская власть, идеология которой основывалась на коммунистическом интернационализме и дружбе народов. Причиной напряжённости была проводимая азербайджанскими большевиками антиармянская политика. Она не могла не отразиться на экономических отношениях. В указанные годы экономические

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>26</sup> Նույն տեղում, թ. 137:

меры, ущемлявшие интересы Армении, носили в Азербайджане целенаправленный характер и касались поставок нефти, приграничной торговли и использования лесных ресурсов. Не вызывает сомнений, что шаги азербайджанской стороны в экономике преследовали цель ослабить позиции Армении в ряде политических споров и решить последние в свою пользу. В статье показана органическая связь между экономикой и политикой, проанализированы узловые эпизоды армяно-азербайджанских экономических отношений и то, как они отразились на решении политических вопросов.

**МИHRAN HAKOBYAN – *On History of Armenian-Azerbaijani Economic Relations of Early Soviet Years (1921-1922)*.** – In 1921-1922 Armenian-Azerbaijani trade and economic relations were strained and complicated, despite the establishment of Soviet rule in Armenia and Azerbaijan and the ideological provisions of communist internationalism and friendship of people, coming from it. The main reason for this was the anti-Armenian policy, pursued by the Azerbaijani Bolsheviks, which found its reflections in the economic relations, too. In 1921-1922 the manifestations of Azerbaijani economic sanctions had a programmed nature and were reflected in the context of the following issues: oil supply, border trade and use of forest resources. It is beyond doubt that Azerbaijani economic sanctions in this period had a goal to weaken the positions of the Armenian side and to solve various political issues in favor of Soviet Azerbaijan.

The problematic episodes of Armenian-Azerbaijani economic relations and their reflection on political issues in 1921-1922 are presented in this article. The article also presents the organic connection of manifestations of economic sanctions with the political issues.